ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ՋՈՎՈՒՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ՀԱՇՎԵՏՈՒ ԺՈՂՈՎԻ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Սույն թվականի նոյեմբերի 5-ին Կոտայքի մարզի Ջովունի համայնքում տեղի ունեցավ համայնքի ղեկավարի 2010 թվականի մինչև նոյեմբեր ամիսն ընկած ժամանակահատվածի հաշվետու ժողովը:

Ժողովին ներկա էին համայնքի ղեկավարը, համայնքի ղեկավարի աշխատակազմի աշխատակիցները, համայնքի ավագանու անդամներ, համայնքի բնակիչներ:

Բացման խոսքով ելույթ ունեցավ համայնքի ղեկավար Սերժիկ Ավետիսյանը, նշելով որ ժողովի նպատակը Ջովունի համայնքում վերջին տասը ամիսներին իրականացված աշխատանքների մասին ներկայացնելն է:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՍՆԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Համայնքի ժողովրդագրության, բնակչության թվաքանակի և համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատարածքների մասին.
2. Համայնքում իրականացված սոցիալ-տնտեսական և մշակութային միջոցառումների մասին.
3. Համայնքի ֆինանսական գործունեության, բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման մասին տեղեկատվություն.
4. Համայնքում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ.
5. Համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում կատարված աշխատանքների մասին.
6. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների պաշտպանության բնագավառում.
7. Համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերի և իրականացված աշխատանքների մասին.

1. Համայնքի ժողովրդագրության, բնակչության թվաքանակի և համայնքի վարչական սահմաններում գտնվող հողատարածքների մասին.

2010 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ Կոտայքի մարզի Զովունի համայնքի ունի 1073 տնտեսություն, համայնքի բնակչության թվաքանակը կազմում է մարդ:

Համայնքի վարչական տարածքը կազմում է 2046 հա:

2. Համայնքում իրականացված սոցիալ-տնտեսական և մշակութային միջոցառումների մասին.

1. Համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին տրվել է դրամական օգնություններ.
2. Մայիսի 9-ի տոնակատարությունների հետ կապված համայնքի հուշարձան համալիրում տեղի է ունեցել տոնական միջոցառումներ և համայնքում Հայրենական Մեծ Պատերազմի և Արցախյան ազատամարտի մասնակիցներին տրվել է դրամական պարգևներ.

3. Համայնքի ֆինանսական գործունեության, բյուջեի եկամուտների և ծախսերի կատարման մասին տեղեկատվություն.

Զովունի համայնքի 2010 թվականի 10 ամսվա

բյուջեի եկամուտների կատարողականը

	հաշվարկային (հազար դրամ)	փաստացի (հազար դրամ)	կատարման %-ը (հազար դրամ)
1. հողի հարկ	4 260.6	3 395.2	79.7
2. գույքահարկ	13 935.0	10 492.3	75.3
3. տեղական տուրքեր	5 330.0	2 893.3	54.3
4. դոտացիա	42 946.0	42 796.0	99.6
5. այլ մուտքեր	5 933.0	4 880.0	82.2
այդ թվում՝ այլ տրանսֆերտներ	1 500.0	1 350.0	90.0
Ընդամենը	*73 904.6*	*65 807.7*	*89.0*

Ծախսերի կատարողականը

	հաշվարկային (հազար դրամ)	փաստացի (հազար դրամ)	կատարման %-ը (հազար դրամ)
տեղական ինքնակառավարում	34 126.5	22 029.2	64.6
այդ թվում՝			
1. վարչական	33 026.6	22 029.2	66.7
2. ֆոնդային	-	-	
կրթություն, գիտություն	21 788.0	17 723.0	81.3
այդ թվում՝			
1. արվեստի դպրոց	6 788.0	6 105.0	89.9
2. մանկապարտեզ	8 150.0	6 522.0	80.0
3. մշակութային կենտրոն	6 850.0	5 096.0	74.4
այլ ծախսեր՝ հանրային ծառայ.	5 907.0	1 590.0	26.9
գյուղատնտեսություն	1 500.0	390.0	26.0
փողոցային լուսավորություն	1 833.0	350.2	19.1
պահուստային ֆոնդ	3 750.0	-	-
սոցիալական պաշտպանություն	5 000.0	4 590.0	91.8
Ընդամենը	*73 904.6*	*46 672.4*	*63.2*

Կապիտալ ծախսեր			
ֆոնդային բյուջե	26 400.0	25 237.4	95.5

4. Համայնքում քաղաքաշինության և կոմունալ տնտեսության բնագավառում կատարված աշխատանքների վերաբերյալ.

Համայնքում 2010 թվականի տասը ամիսների ընթացքում համայնքում տրամադրվել է համապատասխանաբար՝

1. 40 շինարարության թույտվություն
2. 2 քանդման թույլտվություն
3. 20 ավարտական ակտ

Համայնքում կատարվել է ամենշաբաթյա աղբահանության համայնքի բյուջեի միջոցներով թվով երկու տրակտորների միջոցով, ինչի համար համայնքի բյուջեից տրամադրվել է 1 200 000 դրամ գումար.

5. Համայնքում առևտրի և ծառայությունների բնագավառում կատարված աշխատանքների մասին.

Համայնքում 2010 թվականի նոյեմբեր ամսվա դրությամբ գործում են 22 առևտրի, 1 հանրային սննդի, 3 կենցաղային ծառայության օբյեկտներ, 1 դեղատուն, 1 շինարարական նյութերի խանութ, 3 բենզալցակայան, 2 ԱԳԼԵԿ, 2 խաղատուն և 11 խաղասրահ:

Հաշվետու ժամանակաշրջանում հսկողություն է իրականացվել 3 առևտրի օբյեկտում, տրամադրվել է համապատասխանաբար.

1. 8 ծխախոտի և ոգելից խմիչքի թույլտվություն
2. 4 խաղատների և շահումով խաղերի ժամը 24^{00}-ից հետո աշխատելու թույլտվություն
3. 2 արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն

6. Համայնքի ղեկավարի գործունեությունը քաղաքացիների պաշտպանության բնագավառում.

Կատարվել է քաղաքացիների ընդունելություն օրենքով սահմանված կարգով, քննության է առնվել քաղաքացիների դիմումները և առաջարկությունները:

Հաշվետու ժամանակաշրջանում գյուղապետարանում գրանցվել է 333 դիմում, համայնքի ղեկավարի մոտ կայացել է 62 ընդունելություն, խնամակալության, որդեգրման և հոգեբարձուների հանձնաժողովը որոշումներ չի կայացրել, վարչատուգանային հանձանողովի կողմից քննարկվել է 25 գործ:

7. Համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերի և իրականացված աշխատանքների մասին.

1. Կատարվել է նոր ճանապարհների ասֆալտապատման աշխատանքներ 1300 քմ մակերեսով.
2. Կատարվել է նաև մոտ 900 ասֆալտապատ ճանապարհների թոսային նորոգման աշխատանքներ.
3. Կառուցվել է 12 մլն դրամի նոր կոյուղագիծ, որն էլ միացվել է գոյություն ունեցող Երևան-Հրազդան կոլեկտորին.

Նիստի օրակարգային հարցերը սպառվեցին և նիստն հայտարարվեց փակված: